ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դրամական պահանջներով հայց ներկայացնելու համար պետական տուրքի չափը որոշվում է հայցագնի հիման վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 9.4-րդ կետի համաձայն՝ առաջին ատյանի դատարաններ տրվող հայցադիմումների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով՝ բազային տուրքի 50-ապատիկի չափով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետական տուրքի գումարը հայցվորի կողմից նախապես վճարվել է, իսկ հայցը ենթակա է բավարարման, ուստի Դատարանը գտնում է, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից հօգուտ հայցվորի ենթակա է բռնագանձման 50,000 ՀՀ դրամ՝ որպես բավարարված հայցապահանջի համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

Միաժամանակ նկատի ունենալով, որ պետական տուրքից զատ այլ դատական ծախսեր չկան, Դատարանը դատական ծախսերի հարցը համարում է լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-րդ, 192-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

«Թեյսթի Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցը բավարարել:

Անվավեր ճանաչել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2023 թվականի հունիսի 23-ի ««Թեյսթի Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» որոշումը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից հօգուտ «Թեյսթի Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության բռնագանձել 50,000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Վճիռը կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

Վճիռը կամովին չկատարվելու դեպքում այն կկատարվի պարտապանի հաշվին դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով:

ԴԱՏԱՎՈՐ Ս.ՈՒԼԻԽԱՆՅԱՆ

Վճիռը «___» «_____» 2023 թվականին մտել է օրինական ուժի մեջ:

ԴԱՏԱՎՈՐ Ս. ՈՒԼԻԽԱՆՅԱՆ